175 Հաճախակի արի դու Գողգոթա՝

1. Հաճախակի արի դու Գողգոթա՝
Այստեղից է կյանքիդ սկիզբը,
Նայիր Աստծո զոհին խաչի վրա՝
Քեզ համար է թափվում արյունը:
Անմեղ ձեռքերից արյունը հոսեց,
Աստծո Որդին այստեղ մահացավ,
Գողգոթայում երկնքից դուռ բացվեց,
Մարդկությունը փրկություն ստացավ:

2. Թող որ այս քո կյանքի արահետը
Հեռու չգնա այն հին խաչից,
Որ հոգիդ, ինչպես մանկական սիրտը,
Մաքուր լինի բոլոր մեղքերից:
Երջանկությունը հեռվում մի՛ փնտրիր,
Արի՛ այստեղ և դու կգտնես,
Խաչի մոտով անտարբեր մի՛ անցիր՝
Այստեղ Հիսուսով կյանք կգտնես:

3. Այստեղ են մարդիկ միշտ նայել հույսով,
Այստեղ են մեր երազանքները,
Այստեղ էր, որ Հիսուսն Իր արյունով
Կորստից ազատեց աշխարհը:
Թեկուզ մարդկության ողջ պատմությունը
Բազում դարերի մեջ մոռացվի,
Հիսուսի տարած մեծ հաղթությունը
Հավիտենությունն էլ չի ջնջի: